

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ 1918-1920թթ. և ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՁՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
Վ.Վիրաբյան

1. Հայաստանի Առաջին հանրապետության (28 մայիսի 1918թ. - 2 դեկտեմբերի 1920թ.) անբարենպաստ ռազմաքաղաքական իրավիճակը, դրա հետևանքները նորանկախ պետության կայացման գործընթացում: Չնայած Սարդարապատյան հերոսական ճակատամարտաշարքի հաղթական ելքին, հայերը բավարարվեցին Քաթուհի տխրահռչակ պայմանագրով (4 հունիսի 1918թ.), որի արդյունքը եղավ խարխլված ռազմական իրավիճակը, աշխարհաքաղաքական մեկուսացվածությունը և խեղդուկ ազգամիջյան փոխհարաբերությունների միջավայրը: Պետք է նշել, որ, այնուամենայնիվ, Հայաստանի Առաջին հանրապետությունը կատարեց իր պատմական կարևոր առաքելությունը ստեղծվեցին ժողովրդավարության ու անկախ պետականության համակարգ, պատկանելիք ու պետական համալսարանից մինչև պետքանկ ու բանակ:

2. ՀՀ կառավարության և պառլամենտական ֆրակցիաների, կառավարական ու ոչ կառավարական կուսակցությունների (ՀՀԴ, Սոցիալ-դեմոկրատական, Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցություններ և այլն) դիրքորոշումը բանակի, պատերազմի և ռազմական քաղաքականության հարցերում: Միլիցիայի (ոստիկանության) ստեղծումը: Առաջին քայլերը հետախուզության և հակահետախուզության հատուկ ծառայությունների այլևայլ կառույցների ստեղծման ուղղությամբ:

3. Աշխարհաքաղաքական լարված իրադրության մեջ 1918թ. դեկտեմբերին բռնկված երկշաքաթյա վրաց-հայկական պատերազմը աղետալի սոցիալ-տնտեսական և քաղաքական հետևանքներ ունեցավ, որը ձեռնտու էր, առաջին հերթին, Հայաստանի նկատմամբ ոչ բարոյացակամ երկրներին, չնայած Դրոյի գլխավորությամբ գործող հայկական մոտ 6 հազարանոց զորքի հաջողությամբ 12 հազարանոց վրացական լավ զինված բանակի դեմ: Այնուհանդերձ, Լոռու «չեզոք» գոտու առաջացումը չի կարելի որակել որպես հայկական կողմի հաղթանակ, առավել ևս՝ ամրապնդված դիվանագիտական բեմախորթակում: Դա ընդամենը պետք է դիտարկել որպես ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակից բխող համգուցալուծում, որը որոշակիորեն առավել ձեռնտու էր հայ ժողովրդին հառակորդ կողմերին, քան Հայաստանին: ՀՀ Մինիստրների խորհրդի 1919թ. հուլիսի 15-ի որոշումը հայ-վրացական տարածքային վեճերը բանակցությունների միջոցով լուծելու մասին, մինչև որ Փարիզի հաղաղության վեհաժողովը վերջնական վճիռ կկայացներ Ախալքալաքի և Բորչալուի վերաբերյալ: Հետագա քայլեր կայունացնելու աշխարհաքաղաքական իրավիճակը, ապահովելու տարանցիկ բեռնափոխադրումները (սննդի, հագուստեղենի և այլն), զենքի ու զինամթերքի առաքումները, որոնց մոտ 27 տոկոսը ապօրինաբար բռնագրավվում էր վրացական իշխանությունների կողմից:

4. ՀՀ կառավարության ռազմաքաղաքական դիրքորոշումը Արցախի խնդրում: 1919թ. օգոստոսի 22-ի Լեռնային Ղարաբաղի Ադրբեջանի հետ համաձայնագրի բացասական հետևանքները հայկական կողմի համար, որով, թեկուզև ժամանակավորապես, Ղարաբաղը դառնում էր Ադրբեջանին ենթակա մաս՝ հարցի արդարամիտ լուծման աղտոտ հույսեր փայլախելով մեծ տերությունների Փարիզում իրավիճակից հետալատերազմյան վեհաժողովի հետ (տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ. 548, ք.166 - 180; գ.576, ք.4-17, և այլն):

5. Ռազմաքաղաքական իրավիճակի որոշակի մեղմացումը 1919թ. վերջին - 1920թ. սկզբին Հայաստանի հանրապետության հարավային շրջաններում, ադրբեջանա-թուրքական խռովությունների ճնշումը Բոյուք-Վեդիի, Ջանգիրբասարի շրջաններում: Ջանգիրբասարի օպերացիայի և ներքին քաղաքացիական կռիվների մասնակցած հայկական կանոնավոր բանակի զորամասերի բարոյալքումը և կազմալուծումը կապված թալանին և հարստահարություններին զինվորականության մասնակցության հետ, զինվորականների վերաանրումը, զորքի տկարացման հետևանքները թուրք-հայկական 1920թ. պատերազմի ժամանակ:

Անհանգիստ ռազմաքաղաքական իրադրությունը 1920թ. սկզբին Հայաստանի որոշ տարածաշրջաններում. Կարսի մարզում և, մասնավորապես, Ջարուշատի, Արբարայի և

Չլդրի շրջաններում խռովություն բարձրացնելու ադրբեջանա-թուրքական կողմի փորձերը: Վրացական կողմի վտանգավոր ու երկդիմի չեզոքությունը ադրբեջանա-հայկական հակամարտությունում (տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.200, ց.1, գ.33, ք.11-12, 49, ֆ.201, ց.1, գ.47, ք.11-12, և այլն) Ադրբեջանա-թուրքական մեքենայությունների ակտիվացումը Շարուր-Լախիջևանում և Դամարուլի շրջանում: Ռազմաքաղաքական լարվածության պահպանումը Բոյուք-Վեդիի շրջանում, բնամական ենթարկելի և հետախուզության բայթայիչ գործունեությունը և նպատակադրումը կտրելու Ջանգեզուրը Հայաստանից (1920թ. հունվար-ապրիլ): ՀՀ կառավարության, տեղական մարմինների և հայկական հատուկ ծառայությունների հակազդումը այդ քայլերին:

6. Իրավիճակի սրման նոր փորձերը թուրքերի կողմից, գորբերի վերախմբավորումները սահմանի ողջ երկայնքով: Կարսի շրջանում ռազմաքաղաքական իրավիճակի կայունացման ՀՀ կառավարության փորձերը: Անգլիացիների կասկածելի քայլերը 60-ից ավելի իրանոսների, զենքի ու զինամթերքի զգալի պաշարների դուրսբերումը Կարսից և տեղափոխումը Բաքու:

1920թ. մայիսյան անհաջող բոլշևիկյան ապստամբության խարխիլիչ ազդեցությունը ՀՀ ռազմաքաղաքական իրավիճակի վրա՝ ՀՀ կառավարության ջանքերը կայունացնելու Սարիղամիշի, Կարսի և Ալեքսանդրապոլի կայազորները: 1920թ. հունիսի կեսերին հայկական կողմի գործողությունները ամրապնդվելու Օլբիի ածխահանքերի հատվածում և դրանով իսկ վերականգնելու խարխլված հեղինակությունը և ռազմաքաղաքական իրավիճակը: Աշխարհաքաղաքական նոր իրողությունների անտեսումը ՀՀ քաղաքական շրջանների կողմից:

7. Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակի վերջնական վատթարացումը 1920թ. աշմանը: 1920թ. սեպտեմբերին սկսած թուրք-հայկական պատերազմի հետևանքով (հոկտեմբերի 14-ի հակահարձակման հայկական փորձի ձախողումը, հոկտեմբերի 30-ին Կարսի «անտոիկ» ամրոցի անկումը և կայազորի անձնատուր լինելը, նոյեմբերի 6-8 ստորացուցիչ զինադադարը, դեկտեմբերի 2-ի անոթալի պայմանագիրը Ալեքսանդրապոլում): ՀՀ ռազմաքաղաքական իրավիճակը շտկելու նպատակադրումով Ազգերի Լիգային հղված առերեսագրերի շարքի հետ կապված ակնկալվող օգնության վերջին հույսերի մարումը: Երևանի համաձայնագիրը (2 դեկտեմբերի 1920թ.), այլընտրանքի բացակայությունը և Հայաստանի խաղաղ խորհրդայնացումը: Նոր աշխարհաքաղաքական իրավիճակի առաջացումը, դրա ռազմաքաղաքական և պատմական հետևանքները:

РЕЛИГИОЗНО-ФИЛОСОФСКИЕ АСПЕКТЫ ИНДУИЗМА
М. Оганесян

Индуизм — национальная религия большей части населения Индии (наряду с буддизмом). Непоса, теснейшим образом связанный со всеми аспектами традиционной индийской культуры, с традиционной социальной организацией индийского общества.

Из древнего индуизма (брахманизма) выдвинулись и другие религии Индии — буддизм (самая ранняя по происхождению мировая религия), джайнизм.

В рамках индуистской традиции были разработаны оригинальные и глубокие религиозно-философские системы, внесшие свой вклад в развитие философской мысли человечества.

Религиозные доктрины индуизма: атман (душа, "я"), карма и сансара, мокша или нирвана (освобождение).

Социальная доктрина индуизма: индуизм санкционировал и осветил древнеиндийское деление общества на сословия (варны) — брахманов, кшатриев, вайшьев и шудр. Первые три сословия считались "дваждырожденными", поскольку получив посвящение, они как бы обретали второе, духовное рождение, чем были лишены шудры, которые не допускались к изучению священных Вед и тем самым исключались из числа людей, которые могут достичь религиозной цели индуизма — нирваны — освобождения из круговорота сансары (круговращение). выход за пределы чередования смертей и рождений, обретение совершенства. В средние

века система варн была дополнена системой каст (Джати) - общественное деление по профессиональному признаку, которое наследовалось потомками.

Священные тексты индуизма делятся на две большие группы: тексты откровения (шрути) и тексты предания (смирити). Слово "шрути" означает "услышанное", т.е. откровение, полученное древними мудрецами (риши), которые поняли божественные вибрации (шabda) и стали носителями высшего знания и ведения. Поэтому тексты откровения носят также название "Веды" ("знать", "ведать"). Тексты Вед многочисленны и создавались в разные исторические эпохи. Древнейший слой Вед - самхиты, которых четыре: Ригведа - Веда гимнов, созданная индоариями в конце II-го тыс. до н.э.; Самаведа - Веда папевов, Яджурведа - Веда жертвенных формул и Атхарваведа - магические и заклинательные тексты, отражающие религиозные представления аборигенов Индии - дравидов. Следующим слоем ведической литературы являются брахманы, арanyakи, упанишады, составляющие философскую часть Вед, в которых излагается учение об атмане (истинном Я), Брахмане (абсолюте) и об их единстве. Все брахманы, арanyakи и упанишады группируются по четырем самхитам, образуя полный текст Вед.

Тексты предания обладают меньшей сакраментальностью, чем Веды. К смирити (запомненное) относятся индийские эпосы - Махабхарата и Рамаяна, содержащие в себе специфические тексты исключительно религиозно-философского характера, важнейшим из которых является Бхагавадгита (Песнь Господня), оказавшая огромное влияние на формирование индуизма и всей духовной культуры Индии. В состав смирити входят также пураны - сочинения богословского характера, в которых теологические и религиозно-философские идеи переплетаются с древними мифами, сюжетами из эпосов и поставлений культового уровня индуизма.

Важнейшими особенностями индийской философии является ее тесная связь с религиозными учениями Индии, что позволяет определить ее как религиозную философию, и ее психологизм, т.е. ориентацию не столько на познание внешнего мира, сколько природы и характера внутреннего мира человека, его сознания, психики. Согласно традиции все религиозно-философские школы Индии делятся на две группы: ортодоксальные (астика) и неортодоксальные (настика). Первые признают абсолютный духовный авторитет Вед и представляют собой философскую традицию брахманизма (индуизма), вторые - это материализм - локаята, джайнизм и буддизм, авторитета Вед не признают.

Индийская философия является живой традицией, к ней проявили глубокий интерес такие мыслители и писатели, как А. Шопенгауэр, М. Хайдеггер, Рене Ролан, Г. Гессе, А.Н. Толстой и другие.

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՍԱՆ ԱՈՍՋԱՐԿՆԵՐ

Կ. Գևորգյան

Վերջերս մի շարք ձեռնարկություններում անցկացրած հարցումների արդյունքները մեզ հիմք են տալիս եզրակացնելու, որ արտադրական բախումները իրենց բնույթով բաժանվում են երկու հիմնական մասի. ա) բախումներ, որոնք կառավարման ոչ բավարար արհեստավարժության և լուրջ բացթողումների հետևանք են, և բ) բախումներ, որոնց հիմքում ընկած է նույն ձեռնարկության աշխատակազմի առանձին անդամների անհատական-հոգեբանական գործոնները, մտածողությունն ու վարվելակերպը:

Դժվար չէ հասկանալ, որ ասվածը բնորոշ է անցումային շրջանում հայտնված ձեռնարկություններին, որտեղ նախկին, կենտրոնացված կառավարման համակարգը անվերադառնալիորեն գոյություն չունի, իսկ այն ամենը, որը պետք է ամրողողվին փոխարինելի դրան, և որն էլ շուկայական տնտեսության «կմախքն» է, դեռևս բոլորովին կամ մասամբ չի գործում:

Փորձ է արվել բախման վերոհիշյալ երկու ձևերը ուսումնասիրել առանձին-առանձին, և մասնավորապես, մատնանշել է հետևյալը. կառավարման բերությունների հե-

տևանք հանդիսացող բախումները հիմնականում կադրային ոչ ճիշտ քաղաքականություն վարելու արդյունք են: Դրա մեջ են մտնում թե կադրերի սխալ հավաքագրումը և ընտրության մեթոդները, թե հովանավորչությունը, որի դեպքում նախապատվությունը, որպես օրենք տրվում է ազգակցական կապերին, ընկեր - բարեկամներին, առանց հաշվի առնելու տվյալ անձի պաշտոնին համապատասխանելը: Լուրջ թերացում է նաև կադրերի վերապատրաստմանը չկարևորելը և դա անհրաժեշտ նյութական միջոցների բացակայությամբ բացատրելը:

Արտադրական բախումների մյուս տեսակը, որի հիմքում անհատի հոգեբանական գործոններն են, ձեռնարկությունում բավականին տարածված ըստ հետազոտության արդյունքների, բացատրվում է անցումային շրջանին հատուկ մի շարք նոր երևույթներին խիստ դժվարությամբ արագատացվելը, նախկին ստերեոտիպներից, կարծրացած մտածողությունից դժվարությամբ հրաժարվելը կամ նույնիսկ հրաժարվել չցանկանալը: Փոփոխությունների ցանկացած գործընթացում բարոյա-հոգեբանական, անհատական գործոնը որոշիչ է, և պատահական չէ, որ այն նաև դրսևորվում է այս ոլորտում:

Չարցագրույցների և հարցաթերթիկների հիման վրա անցակացրած այս փոքր հետազոտության արդյունքում կարելի է եզրակացնել, որ կառավարման և հոգեբանական գործոնները կարող են համարվել և արտահայտվել միասնաբար, առաջացնելով խոր, դեստրուկտիվ բախումներ, որոնց «բուժումը» ձեռնարկության համար թե ֆինանսական, թե մարդկային միջոցների մեծ կորստի կրելի: Ձեռնարկությունների ղեկավարությանը անհրաժեշտ է հակվել այս կարևոր հարցի մարդկային ռեսուրսների ճիշտ կառավարմանը, միաժամանակ պլանավորելով այս ոլորտում ռազմավարությունը թե հավաքագրման փուլում, կիրառելով հստակ և իրական, այլ ոչ ֆորմալ, ընտրություն, թե որակավորման փուլում, երբ տեխնիկական խնդիրներից գատ նաև հաշվի կառնվեն անպայմանորեն հոգեբանական «վերապատրաստման» խնդիրները:

МОТИВАЦИЯ РАБОТНИКОВ УПРАВЛЕНЧЕСКОГО ТРУДА

С. Акопян

Творческая и социальная активность работников, и как следствие результаты работы организации зависят от уровня разработанности и применимости мотивационных систем. В организации любого типа собственности управленческие работники являются тем звеном, которое обеспечивает оптимальное и эффективное управление. Именно в связи с этим проблемы их мотивации наиболее актуальны при любой общественно-политической формации.

Анализ мотивационных моделей, используемых в организациях разных стран, дает основание утверждать, что каждая модель своеобразна и отличается от других своим содержанием. Более того, нет и не может быть одной модели, пригодной для всех организаций, даже в границах одной отрасли, а тем более государства. Необходима адаптация (приложение) каждого подхода к конкретной организации, к конкретному подразделению, к конкретному работнику.

В условиях перехода к рыночной экономике ряд организаций самостоятельно разрабатывают и применяют мотивационные модели применительно к определенным задачам и целям. Использование на практике теоретических концепций, их эффективность зависит от управленческих мероприятий, проводимых государством.

Проведение мотивационной политики в организации зависит также от управленческого аппарата самой организации. В связи с этим необходимо заметить, что управленческая культура не соответствует требованиям экономики переходного периода. Более того, эффективность управления низка в силу ряда факторов политического, экономико-правового, организационно-технологического характера, и самое главное - неэффективной мотивационной системы.

Анализ мотивационных моделей, применяемых в разных странах позволил разработать мотивационную модель для применения в армянских организациях.

Она включает в себя: материальное стимулирование (ощутимо по труду, премиальные системы); моральное поощрение (в котором отображены личные моральные интересы отдельного работника, признание его личной значимости); социально-вагатуральное поощрение; поощрение социально-должностной карьеры; вознаграждения, выплачиваемые дополнительно за достижения в труде.

АРМЯНОВЕДЕНИЕ В РОССИИ XIX в.

В. Тунян

Для развития армяноведения в России на протяжении XIX в. характерно наличие ряда этапов ознакомительный, освоительский, деятельность армяноведческих центров и комплексное освещение армянских тем. В начале XIX в. армяноведение являлось составной частью представлений об Азии. В 1811 г. достоянием русской общности стал проект "Мысли о заведении в России Академии Азиатской". Целью Академии провозглашалось восполнение знаний об азиатских странах. На Академию возлагалась задача изучения языков и литературы Азиатских народов, подготовка переводчиков. Обращалось внимание на Армению и Грузию. Творчество армянского народа характеризовалось как terra incognita: "Армянская литература так мало известна, что мы не знаем еще и имена тех сочинений, которые к ней относятся". Проект Азиатской Академии был учтен дейст. ст. сов. Иоакимом Лазаревым. Он выдвинул проект организации "Армянской Лазаревых Академии". Правительство не приняло название "Академия", соответствующее статусу "ученого общества", взамен которой в 1815 г. было устроено училище.

В 1817 г. при правителе Кавказа А. П. Ермолове было организовано "Общество по описанию Персии", собравшее значительные сведения о народах, входящих в состав шахской державы. Член общества поручик Д. Бобарыкин составил "Описание Ереванской области в 1817 г.". Вершиной деятельности общества является работа С. Броневского "Новейшие географические и исторические известия о Кавказе", из двух частей, вышедшая в Москве в 1823 г. Чисто армяноведческий центр был создан армянами России. Четвертого августа 1823 г. при Лазаревском Училище восточных языков было основано "Общество любителей Древностей Армении", ставившее целью изучить "славное прошлое" Армении, ознакомить русскую общественность с памятниками старины. Председателем общества стал Иоаким Лазарев, а почетными членами сыновья - Ованес, Хачатур и Егизар. На высшем правительственном уровне армяноведческие материалы концентрировались во внешнеполитическом ведомстве и личных бумагах видных сановников, как А. С. Меншиков, А. И. Чернышев, А. П. Ермолов. Связывающую роль между армяноведческими центрами Кавказ-Москва-Петербург играли Александр Худобашев и Хачатур Лазарев.

Во второй четверти XIX в. возникают новые центры: ведомственные, академические и Лазаревский институт восточных языков. Книжтэссенцией камеральных и статистических материалов стала работа министерства финансов "Обозрение Российских владений за Кавказом" из четырех частей (1836 г.), содержащая ценные сведения об Армении. Значительные разработки осуществили академики Х. Фреп, А. М. Шегрен, Я. Броссе, Клапрот. Лазаревский институт издал "Собрание актов, относящихся к обозрению истории Армянского народа" из трех частей. Получила развитие разведывательно-торговая деятельность за границей, отраженная в творчестве И. Ф. Вларамберга, М. Вронченко, Ю. А. Гегемейстера.

После Крымской войны начинается новый качественный этап в развитии армяноведения России. Появляются описания боевых действий в Западной Армении, публикации различных восточных путешествий, освещается тема "Молодой Армении", углубляются представления об армянской литературе. Берлинский конгресс содействовал расширению армяноведческой литературы, публикации описа-

ний и статистических сведений о Западной Армении, деятельности армяноведческих центров в Москве, С.-Петербурге, Казани, Дорнаге и Тифлисе; ценные сведения получили отражение в мемуаристике и армянской беллетристике. В политическом плане доминирующей темой постепенно стало освещение Армянского вопроса на международном арене и внутри державы.

Вся совокупность армяноведческой литературы России содержит ценные сведения об Армении и армянском народе, дает представление о русско-армянских отношениях и состоянии развития менталитета обоих народов.

ԳՐԱԿԱՆԵՐ ԶԱՅՎԱԿԱՆ ՉԱՐՈՒԽՆԼՈՒ ԳՅՈՒՂԻ (ՀԱՅՈՑ ՈՒՏԻՔ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՐԴՄԱՆԱՑ ԳՎԱՐՈՒ) ՀԵՐՈՍԱՊԱՏԱՄԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ (1900-1920 թթ.)

Վ. Վիրաբյան

1. Չարդախլուն Զագիր գետի (այժմյան Աղրբեջանի հանրապետության Շամխորի շրջան) ափին ընկած և պատմական Գարդմանաց (Ուտիք) աշխարհի հնամենի Գանձակ քաղաքից ոչ հեռու գտնվող հինավուրց հայաբնակ գյուղը, դարերի ընթացքում հանդիսացել է շրջակա հայկական 15 գյուղերի հենարանը: 1907 թվականին գյուղն ուներ 1863, 1975 թ.-ին 4000 բնակիչ, որոնք զբաղվում էին հացահատիկային կրկտորանների մշակմամբ, այգեգործությամբ: Չարդախլուի հայերը իրենց բացառիկ մարտական վարքագծով աչքի ընկան նաև 1905-1906 թթ. հայ-թաթարական ազգամիջյան ընդհարումների ժամանակ, չնայած գյուղի ռազմավարական առումով անհարմար աշխարհագրական դիրքին (Հայի Գերաբեկ, Կրզեն, Սարով, Ղարաղալու և Բաղաբեդ գյուղերն ավելի լավ ռազմավարական դիրք ունեին): Չարդախլու գյուղի մարտակոթով հայերի գլխավորությամբ բռնամիտ ըջվեց ոչ միայն Չարդախլուի շրջակայքից, այլև հեռավոր Բարսուն գյուղից: Հակառակորդը 1905 թ. նոյեմբերի 30-ի և 1906 թ. հունվարի 16-ի հարձակումները տանուլ տվեց և, անվառունակ պարտություն կրելով, նահանջեց իր հրոսակների դիակները թողնելով մարտադաշտում (Տես՝ Հայկական բանակ. N4, 1997. էջ 77-80):

2. Գյուղի մարտական տարեգրության մեջ ուշագրավ է նաև չարդախլվեցիների ակտիվ մասնակցությունը հայաբնակ հեռավոր շրջանների պաշտպանությանը և հերոսական կոչվեցին: Ռուսական առաջին հեղափոխության տարիներին գյուղի բնակիչ Ղազար Մանասյանի գլխավորությամբ չարդախլվեցի 26 կամավորներ մեկնել են Արևմտյան Հայաստան և մասնակցել Սասունի հերոսական պայքարին ընդդեմ թուրքական բռնապետության: Այդ հերոսական ջոկատի անդամներից 6-ը չվերադարձան տուն, իսկ ղեկավարը՝ Ղազար Մանասյանը, մենգաբար սպանվեց Շամխորի ծոտ դարանակալած բռնամուտց:

Չարդախլվեցի ենթասպա, ապագա մարշալ Հովհ. Բաղդամյանը գեներալ-մայոր Թ. Նազարբեկյանի գլխավորությամբ գործող Հայկական կորպուսի հատուկ կամավորական դիվիզիայի շարքերում, որպես հեծյալ դասակի հրամանատար, մասնակցել է թուրքական զորքերի դեմ մղվող մարտերին Սարդարապատում: Այնուհետև Հ. Բաղդամյանը ծառայության է անցել հանրապետության զինված ուժերում որպես հեծյալ գնդի հեծելավաշտի հրամանատար մասնակցելով 1920 թ. սեպտեմբերին սկսած թուրք-հայկական պատերազմին:

3. Կարևոր է նշել Չարդախլուի հերոսական պատմության մի դրվագի մասին ևս, որն առնչվում է Հայաստանի Առաջին հանրապետության ժամանակաշրջանին (1918-20 թթ.): Չարդախլվեցիները եղել են իրադարձությունների զարգացման կիզակետերից մեկում: Այդ մասին է վկայում առաջին ռազմա-միլիցիոներական հետևակային գնդի հրամանատար կապիտան Մնացականյանի զեկուցագիրը ուղղված հայկական դիվիզիայի հրամանատարին (5 փետրվարի, 1919թ.), որում Չարդախլու գյուղի (էլիզավետպոլի - Գանձակի գավառ) գյուղացիները տեղեկացնում էին թաթարների ուժեղացված զորահավաքի մասին, որի նպատակը Հայկական լեռնաշխարհի հայերից "մաքրելն" էր՝ Գետաշենից մինչև Բաղաբեդ (ՀՀ ԳԿՊԱ, Ֆ 200, ց.1, գ.158, ք.90): Ավելին, Աղրբեջանի իշխանությունները իրենց հանրապետության անբաժան մասը համարելով Ձանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջևանը, Շարուրը, Սուրմալուն, Ղազախը, - գրում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը

Բաքվում 1920թ. սեպտեմբերի 20-ին, - գորակոչից չեն ազատում նաև Ադրբեջանի գանազան վայրերում ապրող տաճկահայերին, ինչպես, օրինակ, Գանձակի շրջանի Չարդախլու գյուղում ժամանակավոր բնակություն հաստատած տաճկահայ գաղթականներին: Բնակահարքար, գյուղի բնակիչները ձեռնարկում են միջոցներ ինքնապաշտպանության կազմակերպման և բջնանուն հակահարված տալու համար:

4. Գյուղի վիճակը չի թեթևանում նաև Կարմիր բանակի առաջխաղացումով: Պետք է նշել Չարդախլուից ոչ հեռու գտնվող Գետաբեկի գործարանի մերձակա պղնձի հանքավայրերի կարևորությունը տնտեսաքաղաքական առումով: Դա երևում է Գ.Կ.Օրջոնիկիձեի ուղիղ հեռագրագծով խոսակցության գրառումից 11-րդ Կարմիր Բանակի ռազմահեղափոխական խորհրդի անդամ Վեսնիկի հետ: Դրանում նշվում է ինչպես Դարաբաղում, այնպես էլ այլ վայրերում հակահեղափոխական ապստամբության ճնշման մասին: Միաժամանակ, վերոհիշյալ խոսակցությունից ակնհայտ է դառնում, որ Օրջոնիկիձեի համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում Չեզամից ոչ հեռու գտնվող հայկական Չարդախլու գյուղի զինաթափման և Գետաբեկի գործարանի ազատագրման խնդիրը, որոնք շրջապատված են դաշնակցականների կողմից: Սակայն, ինչպես ցույց են տալիս արխիվային վավերագրերը, իրադարձությունները դրանով չեն ավարտվում: Գյուղի բնակիչները բոլորովին էլ չէին պատրաստվում հեշտ ու հանգիստ հպատակվել պատմական այդ գործընթացների անտրամաբանական ընթացքին: Այսպես, 1920 թ. հուլիսի 11-ին Բաքվից 11-րդ Կարմիր Բանակի իրամանատարին ուղղված հեռագրում Գ.Կ.Օրջոնիկիձեի, նշելով Դազախի շրջանում գտնվող ապստամբներին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին, դրա հետ մեկտեղ ընդգծում է, որ դաշնակցականները Գետաբեկի շրջանում ոչնչացնում են մուսուլմաններին և հայերին, և որ Շամխորի գավառի Չեզամ և Գետաբեկ կայարանների միջև ընկած միջակայքում գտնվող հակահեղափոխական Չարդախլու հայկական գյուղն անհրաժեշտ է զինաթափել, որի համար հարկավոր է Դազախի շրջանից ուղարկել 200 կարմիրբանակային և երկու հարյուր հայ (Տե՛ս՝ Нагорный Карабах в 1918-1923 гг. Сbornик документов и материалов, Ер. 1992, с.76, 499, 531): Սակայն չարդախլվեցիները ոչ միայն չեն ընկճվում, այլև շարունակում են օգնել հարևան գյուղերին: Դեռևս հայթուրքական ընդհարումների ժամանակ (1905-1907 թթ.) թուրքերը Չարդախլուից արևմուտք, ութ կիլոմետր հեռավորության վրա գտնվող Աթաբեկ գյուղի մայրկաններին, որոնք դառեր շարունակ ապրել են այնտեղ, դուրս են բշել երեք բնակավայրից և բնակվել այդ գյուղում: 1924 թ. ապրիլին Չարդախլուի հերոս Նրիտասարգյունը հայկական զլխավորությամբ Աթաբեկ գյուղից դուրս է բշում թուրքերին, իսկ չարդախլվեցի Զարուբյուն Վիրաբյանը (վերջինս դեռևս 1915 թվականին գորակոչվել էր ցարական բանակ և իր ցանկությամբ ուղարկվել ռազմաճակատ, ծառայելով Սարիղամիշում, և գորացրվելուց հետո վերադարձել գյուղ և կազմակերպել գյուղի երիտասարդության գիմկած պայթարթ թուրքերի ոտնձգությունների դեմ) իր մեծ գերդաստանով և մոտ 50 այլ ընտանիքներ կամովին տեղափոխվում են Աթաբեկ գյուղ, ուր հայությունը արմատներ գցեց մինչև իր բռնի տեղահանությունը 1989-90-ական թթ.-երին, (Ա.Վիրաբյան, Գիրք դարերի խորքից, Եր. 1998, էջ 128): Զերոսական հայկական գյուղի միկրոգենոցիդի քաղաքականությունն ավարտվեց:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ս.Սարգսյան

Ամեն մի քաղաքականության հիմնական բովանդակությունը հանրանպատակի դասակարգերի, ազգերի և մեծ ու փոքր այլ սոցիալական խմբերի, ինչպես նաև նրանց շահերը արտահայտող կազմակերպությունների կուսակցությունների, պետությունների, և այլն կենսագործունեության ապահովմանը ուղղված նպատակի ձևավորումն է մշակումը և իրականացումը:

Նպատակը մարդկանց պահանջմունքների բավարարումը բնութագրող, նախօրոք մտածված, կանխարկված ավարտուն արդյունքն է, որի իրականացմանն է ուղղված նրանց ողջ գործողություններն ու գործունեությունը:

Գործունեության նպատակաուղղված բնույթը հատուկ է միայն մարդուն: Եթե կենդանիների մոտ գործողությունների շարժառիթը, բնական պահանջմունքների բնազային

բավարարումն է և ունի պարզ ուղղվածություն, ապա մարդկանց մոտ ամեն մի գործողություն և գործունեություն նպատակաուղղված գիտակցված համակարգված բնույթ ունի:

Նպատակի առավել բարձր մակարդակ է հանրանպատակը: Այն հանրությունների պահանջմունքների բավարարումը բնութագրող, նախօրոք մտածված, կանխարկված ավարտուն արդյունքն է, որի ձևավորմանը, մշակմանն ու իրականացմանն է ուղղված նրանց ողջ գործողություններն ու գործունեությունը և արտահայտվում է հանրային գիտակցության աստիճանը:

Քաղաքականության, որպես հանրանպատակաիրացության գործընթացի ռեսուրսներ են ծառայում գիտությունը, գիտելիքները, տեխնիկական և ֆինանսական միջոցները, գաղափարախոսությունը, հասարակական շրջապատի վիճակը, մասսաների տրամադրությունը և այլ գործոններ, որոնց առկայությունը ողջ գործընթացը դարձնում են ավելի գործնական: Իդեալական հանրանպատակը միշտ մնում է որպես ողջ գործընթացի չափանիշ:

Կախված պահանջմունքների բավարարման բնույթից, բովանդակությունից ու բարդությունից, հանրանպատակները տարբերվում են.

1. Ըստ իրենց նշանակության ա) մասնակի նպատակներ՝ առանձին իշխանությունների, հաստատությունների, կուսակցությունների հասարակության առանձին խմբերի, դասակարգերի նպատակներ, բ) ընդհանուր նպատակներ՝ պետության և ժողովրդի հասարակության թարմացումը, ընդհանուր ճգնաժամից դուրս գալը, ընդհանուր բարիքը նվաճումը և այլն: գ) Հանրնդհանուր նպատակներ ինչպիսիք են համընդհանուր հավասարության, ազատության, արդարության և այլն նպատակներ:
2. ըստ բովանդակության սոցիալական, տնտեսական, գաղափարական, գիտատեխնիկական, էկոլոգիական, իրավական և այլն:
3. ըստ հերթականության, այսինքն, ըստ քաղաքական գործընթացի ստադիայի՝ մտակա, միջանկյալ, հեռավոր ու վերջնական: Ամեն մի քաղաքականության իրական է, ռեալ է, եթե դիմանիլ է, սկսվում է նպատակակերտումից և ավարտվում հանրանպատակի իրականացմամբ՝ հանրության պահանջմունքների բավարարմամբ: Այս առումով քաղաքական գործընթացը ընթանում է մի քանի փուլերով, որոնք իրարից տարբերվում են գործունեության բնույթով, ընդգրկված սուբյեկտների փոխհարաբերությամբ և ստացված արդյունքի բովանդակությամբ: Այդ փուլերն են.
ա) Հանրանպատակակերտում: Այս փուլում ի հայտ են բերվում որոշակի պահանջմունքների նկատմամբ հանրության անբավարարվածությունը, որի հետևանքով սահմանափակվում է հանրության կենսագործունեությունը և որի հետագա շարունակումը կտանի ճգնաժամի և դեգրադացիայի: Ձևակերպվում են այն խնդիրները, որոնց լուծումը հնարավորություն կտա բավարարելու որոշակի պահանջմունքներ: Այդ խնդիրների հիման վրա մշակվում են ծրագրեր և համակարգիչների միջոցով համակարգվում են դրանց իրականացման հնարավորությունները: Նշվում է հանրանպատակի իրականացման տեղը, ժամանակը, օբյեկտների և սուբյեկտների վիճակը, սուբյեկտի ակտիվության աստիճանը և այլն:

2. որոշման ընդունում: Այս փուլում բազմատիպի հաշվարկներ են կատարվում հանրանպատակի իրականացման սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական, բարոյաինոգրաբանական առկա ու պոտենցիալ այն հնարավորությունների վերաբերյալ, որոնցից բխում են հնարավոր հետևանքները:

Նպատակի իրականացման մասին որոշումների ընդունումը անցնում է մի քանի էտապներ.

- ա) իրավիճակի բացահայտում:
- բ) հնարավոր և այլընտրանքային որոշումների արժեքավորում և գնահատում:
- գ) հնարավոր ու այլընտրանքային որոշումների ձևակերպում:
- դ) Այլընտրանքային որոշումներից որևէ մեկի ընդունում:
- 3) Երբ հանրանպատակի իրականացման մասին որոշումը ընդունված է, այն առաջարկվում է իրականացնել Այս փուլը ընթանում է քաղաքական ուժերի բախման կամ համագործակցության, համաձայնության կամ անհամաձայնության, հանդուրժողականության կամ անհանդուրժողականության պայմաններում և վերջնական արդ-

յունքի ստացումը պայմանավորված է քաղաքականության սուբյեկտի պատրաստականությունից:

Եթե հանրանպատակը բխում է ռեալ իրականությունից, ապա այն քաղաքական գործունեության հզոր ֆակտոր է, իսկ եթե սոսկ երևակայության արդյունք է, պատրանք է, և քաղաքական ցանկությունը ընդունվում է իիրականության տեղ, ապա առասպել է իր վտանգավոր հետևանքով:

Չկա քաղաքականություն առանց հանրանպատակի և ամեն մի հանրանպատակի ձևավորման մշակման և իրականացման միասնական գործընթաց ոչ այլ ինչ է քան քաղաքականություն:

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅ ԻՍԿԱՍԱՍԵՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՄԸ Ս. Չոհրաբյան

Փիլիսոփայության հիմնական հարցը հայ իմաստասերները լուծում են իդեալիստորեն, բնությունը դիտում են աստվածային արարչության արդյունք: Կղեմեն Գալանոսը, Ստեփանոս Լեհացին և Դովհաննես Ջուղայեցին գտնում են, որ աստված է ղեկավարում բնության և հասարակության զարգացումը, իսկ Սիմոն Ջուղայեցին և հատկապես Սաթևոս Վանանդեցին ու Ղուկաս Վանանդեցին մերժում են աստվածային նախախնամության գաղափարը: Դոգու և մարմնի փոխհարաբերության հարցում, Սիմոն Ջուղայեցին ընդունում է հոգու և մարմնի կապը, միասնությունն ու փոխազդեցությունը: Ընդհակառակը, Կղեմեն Գալանոսը և Ստեփանոս Դաշտեցին դրանք կտրում են իրարից ու հակադրում միմյանց: Սատերիայի և ձևի փոխհարաբերության հարցում Սաթևոս Վանանդեցին և Ղուկաս Վանանդեցին գտնում են, որ ձևը ոչ թե գոյություն ունի մատերիայից անկախ և ինքնուրույն, այլ ներհատուկ է նրան: Շոշափելով երկնային և երկրային մարմինների կապի հարցը, Դովհաննես Ջուղայեցին, Սաթևոս Վանանդեցին և Ղուկաս Վանանդեցին ի վերջո հանգում են դրանց կապի ու միասնության գաղափարին:

Իմացաբանության հարցերում նրանք ընդունում են ճանաչողության առարկայի օբյեկտիվ գոյությունն ու ճանաչելիությունը: Ընդգծելով ճանաչողության մեջ զգայությունների տեղն ու դերը հայ իմաստասերները վճռական խոսքը կերպապահում են բանականությանը, շեշտում զգայականի և տրամաբանականի կապը և միասնությունը:

XVIII-ի-ին կեսին գաղափարական պարարտ հող նախապատրաստելով փիլիսոփայության լուսավորականության համար խաչատուր էրզրուցնու, Սիսիբար Սեբաստացու, Բաղդասար Դալիբի, Զակար Եսայան Չմարացու, Պետրոս Նախիջևանցու, Սիմոն Երևանցու ջանքերով ստեղծվել է փիլիսոփայության հարուստ գրականություն:

К ХАРАКТЕРИСТИКЕ ВОЗРОЖДЕНЧЕСКОГО ИДЕАЛА ЧЕЛОВЕКА Г. Аюпян, А. Вардумян

Эпоха Возрождения охватывает период ранней стадии кризиса феодализма и зарождения буржуазных отношений. Она возникла как итог развития средневековой культуры и по этому несет на себе отпечаток многих ее черт.

Важнейшей отличительной чертой эпохи Возрождения является ориентация на человека, воздвижение на передний план свободной человеческой индивидуальности.

Если в центре внимания философии античности была природно-космическая, а в средние века - религиозная жизнь, то для Возрождения главная - это светская жизнь, деятельность человека в этом мире, ради этого мира, ради достижения счастья на Земле.

Философское мышление этого периода можно охарактеризовать как антропоцентрическое: центральная фигура здесь не Бог, а человек. Бог - начало всех вещей, а человек - центр всего мира. Он в своей деятельности и замыслах не может быть ничем ограниченным. Эпоха Возрождения характеризуется новым уровнем самосознания человека: гордость и самоутверждение, сознание собственной силы и таланта, жизнелюбие и свободомыслие становятся отличительными качествами передового человека того времени. Человек в эпоху Возрождения представляется физически, телесно, объемно. Он реально представляемое и

изображаемое конкретное существо. Но эта телесно-рельефная индивидуальность, эта личность - материальная человеческая субъективность, эта имманентно - субъективная данность человеку всего существующего и окружающего, вплоть до последних тайн совершенно заново ориентирует человека и все его жизненное мировосприятие. Человек как бы обновляется, молодеет и начинает находить счастье своей жизни в беззаботности и самоудовлетворенности, в красивой жизни, о бездонных глубинах и о трагической напряженности, которой человеку Возрождения часто и не хочется думать.

В философии этой эпохи значительно ослаблены мотивы греховной сущности человека, "испорченности его природы". Основная ставка здесь делается не на Бога, а на собственные силы человека. Важным элементом мировоззрения является так же культ творческой деятельности человека, которая воспринимается иначе, чем в античности или в средние века.

У древних греков господствовал элитарный подход к человеческой деятельности, высшей формой которой считалось теоретические размышления и содержания, ибо именно они приобщали человека к вечному, к самой сущности космоса, в то время, как материальная деятельность, по их мнению, погружает в переходный мир мнений.

Средневековые высшей формой деятельности считало ту, которая ведет к "спасению" души - т. е. молитву, выполнение богослужебных ритуалов, чтение Священного писания.

В эпоху же Возрождения, материально - чувственная, творческая деятельность приобретает своего рода сакральный характер. В такой деятельности человек не просто удовлетворяет свои земные нужды, он создает новый мир, красоту, творит самые высокие в мире - самого себя. В этом плане, на ряду с Богом, человек сотворец мира. Таким образом в мировоззрение Возрождения происходит своеобразная реабилитация человеческой плоти. Человек - гармоничное сочетание физических и духовных начал. Он прежде всего телесное существо. И тело отнюдь не "оковы души", которые тянут его вниз, обуславливают греховные помыслы и побуждения. Телесная жизнь сама по себе самоценна. Поэтому и живопись эпохи Возрождения культивирует красоту, которая проявляется в гармоничном единстве души и тела.

Итальянский философ и гуманист Пикко дел'а Мирандола в своей знаменитой работе "Речь о достоинстве человека" утверждал, что нет ничего более великого, чем человек, созданный Богом, а в нем более великого, чем его ум и душа.

Подводя итог, можно сказать, что идеалом того времени становится разносторонне развитый человек, одинаково хорошо разбирающийся в живописи, архитектуре, этике, эстетике, литературе, педагогике.

ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՐՅԻ ԼՈՒԹՄԱՆ ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՏԻԱՆ ԱՐԴՈՒԼՅԱՄԻՂՅԱՆ «ՉՈՒԼՈՒՄԻ» ՏԱՐԻՆԵՐԻՆ Գ. Տոնյայան

1877-1878 թ.թ. ռուս-թուրքական պատերազմից հետո ռուսական զենքի հարթանակով միջազգային դիվանագիտության ասպարեզ իջավ հայկական հարցը, այն է՝ բարենորոգումների իրականացումն Արևմտյան Հայաստանում: Այնուհանդերձ, ազգայնական մոլուցքով տարված թուրքական կառավարող շրջանների համար նման «ազգային խնդիր» ընդհանրապես գոյություն չուներ: Հայկական հարցը համարելով թուրքիայի ներքին գործը, կամենալով խուսափել Բեռլինի կնգրեսի 61-րդ հոդվածով, ապա 80-90-ական թ.թ. խուսառցած կամ ստորագրած «բարենորոգումների ծրագրերով» կատարվելիք բարեփոխումների կենսագործումից Արդուլ Համիդը /1876- 1909թ.թ./ փորձեց յուրովի լուծել այդ հարց-հանգույցը: Կայսրության շահերից ելնելով՝ անհրաժեշտ էր ի չիք դարձնել Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու հիմքերը:

1876թ. դեկտեմբերի 23-ին հրապարակած Սահմանադրությունը մնաց թղթի վրա, եվրոպական հանդերձանքն իսպառ վերացավ: Սկսվեց Արդուլ Համիդի միահեծան իշխանության ժամանակաշրջանը, որ պատմության մեջ մտել է «Չուլումի շրջան» անունով: Շարունակվում էր երկրի մի քաղաքականությունը մի կողմից հպատակների հավասարեց-

ԵԿՈՆՈԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՏ ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏ ԲԱՂԱԴՐԻՉ

Ռ. Մարտիսյան

Շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղված կրթական ծրագրերի ներդրման և զարգացման անհրաժեշտությունը առանձնահատկորեն ընդգծվել է ոլորտին առնչվող գրեթե բոլոր միջազգային համաժողովներում: Դեռևս 1972 թ. ՄԱԿ-ի Ստոկհոլմյան, իսկ հետագայում նաև Նայրոբիի 1982թ. համաժողովներում ընդունված հռչակագրերում հատուկ նշվում էր էկոլոգիական կրթության և տեղեկացվածության դերը շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հասարակական – քաղաքական նշանակության ուժեղացման գործընթացում:

Այս առումով շատ երկրներում էկոլոգիական կրթությունը դարձել է դպրոցական կրթության բոլոր աստիճանների ուսումնական ծրագրերի պարտադիր բաղկացուցիչ մասը, մեկնակետն ունենալով այն հիմնարար սկզբունքը, որ էկոլոգիական գիտակցության զարգացումը ոչ միայն քաղաքական գործիչների և մասնագետների գործն է, այլև բնակչության ամենալայն շերտերի, որպես շրջակա միջավայրի պահպանման և բարելավման կարևորագույն նախապայման:

Վերջին հանգամանքը, նկատի ունենալով էկոլոգիական կրթական ծրագրերը, պետք է համապատասխան ձևով հարմարեցված լինեն բնակչության բոլոր կատեգորիաներին, նրանց մոտ զարգացնելով այն իրողությունը, որ էկոլոգիական հավասարակշռության խախտումը հզի է լուրջ և շատ հեռուն զնացող հետևանքներով:

Առանձնահատկապես նշանակություն են ստանում վերոհիշյալ կրթական ծրագրերը համալսարանական ճարտարագիտական ուսումնառության կազմակերպման գործընթացում: Այստեղ նեղ մասնագիտական ուղղվածության (էներգետիկա, քիմիական տեխնոլոգիաներ, ընդերքի յուրացում, մետալուրգիա, տրանսպորտ) հատուկ (քննապահական) դասընթացների հներմուծմանը զուգահեռ անհրաժեշտություն է դարձել էկոլոգիական գիտելիքների մատուցումը որպես միջառարկայական հիմքի վրա ձևավորվող և շրջակա միջավայրի համալիր բնույթը ուսումնասիրող դիսցիպլին:

Այս գործընթացի ծավալումը ենթադրում է ուսումնամեթոդական և կազմակերպական որոշակի միջոցառումների իրականացում, համապատասխան կադրային ներուժի արագացված պատրաստում (կամ վերապատրաստում): Կրթական ծրագրերի մշակման ժամանակ անհրաժեշտ է ի նկատի ունենալ այն հանգամանքը, որ շրջակա միջավայրի պահպանությանը նպատակաուղղված կրթությունը անպայման պետք է ելնի նաև մեր հանրապետությանը բնորոշ բնական, տնտեսական, մշակութային առանձնահատկությունների հանրազունարից և ազգային մենթալիտետից: Սույն գեկուցման մեջ տրվում են Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում էկոլոգիական կրթության կազմակերպման առկա իրավիճակը և զարգացման հեռանկարները:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՒՅՈՒՄ

Ռ. Մարտիսյան

Արդյունաբերության ոլորտում աշխատատեղերի կտրուկ կրճատման, ինչպես նաև ճարտարագիտական պատրաստակալության ավանդական մեղ ուղղվածության պարագաներում, ճարտարագիտական բուհերի շրջանավարտները ամենից շատ դժվարություններ են կրում աշխատանքի տեղավորման հարցում:

Վերոհիշյալ բուհի շրջանավարտն մոտ այսօրվա իրողություններում այլևս չունի մասնագիտական ինքնաիրացման նախնական հնարավորությունները:

ման դեկլարացիաներ, մյուս կողմից «քարքարոսական ֆեոդալիզմի» ծանր պայմաններ ստրկության հետ սահմանագծող իրավազրկության: «Զուլումի» քաղաքականությունը հսկայական հետընթաց էր բռնության, տեռորի, ռազմա-ուստիկանական վարչակարգ: Պատահական չէ, որ 19-րդ դ. կեսին ծագած կրոնաքաղաքական ռեակցիոն հոսանք պանիսլամիզմը /համախալանականություն/ Համիդի իշխանության հովանու ներքո դարձավ պետական գաղափարախոսություն և ազգային քաղաքականության անկյունաքարը: Պանիսլամիզմը օգտագործվում էր հակաեվրոպական և հակաուսական իմաստով, փորձ էր կատարվում նվաճել իսլամական աշխարհի համակարգը: Սուլթանը հավակնում էր իր իշխանության ներքո համախմբել Փոքր Ասիայից մինչև Միջին Ասիա ընկած բոլոր մահմեդականներին: Բնականաբար այս տեսության իրականացման համար խոչընդոտ էին հանդիսանում քրիստոնյաները, իսկ առաջին հերթին հայությունը: Կարևորվում էր նաև աշխարհագրական գործոնը: Հայաստանի ռազմավարական նշանակությունը որպես Ասիայում քրիստոնեական աշխարհի ամրակետի /ֆորպոստ/ կամ բուֆերի /պանիսլամիզմի մեթորդյա արտահայտությունը/ վահաբիզմն է, որը վերաճել է համաաշխարհային ահաբեկչության գաղափարական զենքի/:

Սուլթանը չէր քողարկում ատելությունը հայերի նկատմամբ. հակահայկականությունը դարձել էր Աբդուլ Համիդի ներքին քաղաքականության բնորոշ կողմերից մեկը: Համիդը նպատակահարմար էր համարում կտրել հայերի կոկորդը, քան առաջնորդվել մարդկային բանականության տարրական չափանիշներով: Եվ իրող, Բեռլինի կոնգրեսից հետո արևմտահայերի վիճակը ոչ միայն չբարելավվեց, այլ ավելի վատացավ: Աբդուլ Համիդը, առաջնորդվելով համախալանականության սկզբունքով, հայության նկատմամբ գործարում էր երեք հիմնական միջոց մահմեդականացում, ծանր հարկային քաղաքականությամբ ու մշտական հալածանքներով հեռացում և մասսայական քարոզերի միջոցով բնաջնջում: Վերջինիս խոսուն վկայությունը 1890-1896թ.թ. հայկական կոտորածներն էին, որոնց զոհ էր գնացել 300 հազար հայ:

Ինչպես նշում էր ժամանակի «Նովոյե վրեմյա» թերթը «Ամեն ինչ, սկսած առողջ դատողությունից և վերջացրած պետական տնտեսությամբ, գոհաբերվում էր այն գաղափարին, որ հայերը պետք է ցրված լինեն տարբեր նահանգներում»:

Այնուհանդերձ, երկարամյա հալածանքները և կեղեքումները, բռնի կրոնափոխությունը, տեղահանությունները և արտագաղթը ժամանակի ընթացքում չէին փոխում բնակչության հարաբերակցությունը հօգուտ մահմեդականների: Երբ հայկական հարցը միջազգային բնույթ ընդունեց, Հայաստանում հայ տարրի ոչնչացումը օրակարգի հարց դարձավ: Թուրքական վերնախավը որդեգրեց «Հայը մեծամասնություն չունի» նշանաբանը: Գործի դրվեց սուլթանական քարոզարարական մեքենան:

Ժամանակակիցներից մեկը այսպես էր բնութագրում Արևմտյան Հայաստանի վիճակը 19-րդ դ. 90-ական թ.թ. «Թուրքական տիրապետությունը Հայաստանում ճիշտ կլիներ բնորոշել որպես կազմակերպված ավազակություն, օրինականացված սպանություն և վարձատրվող անբարոյականություն»:

Օսմանյան կայսրության պատմությունը վառ կերպով վկայում է, որ այդ պետության բռնակալ կառավարողները դարերի ընթացքում իրենց ներքին և արտաքին նվաճողական քաղաքականությունը մշտապես խարսխում էին ռասայական և կրոնական խտրականության հիմքերի վրա: Տասնյակ ժողովուրդների ճնշելու ու հպատակեցնելու, նրանց ազգային ինքնությունները ոչնչացնելու թուրք սուլթանների գլխավոր և մշտական զենքը յաթաղանի միջոցով իրականացվող ռասիզմն էր, թուրք ազգի «բացառիկության», տիրապետող ազգ լինելու մասին քարոզն ու դրանից բխող գործնական քաղաքականությունը: Սակայն եթե մինչև 19-րդ դ. 70-ական թ.թ. թուրքական սուլթանների ֆեոդալա-բռնատիրական, ասիմիլյատորական ռեժիմը, նրանց կողմից կատարվող հայերի և մյուս հպատակ ժողովուրդների կոտորածները տարբերյին էին, չունեին հստակ պաշտոնական ձևակերպում, ապա Աբդուլ Համիդը այն դարձրեց կանոնավոր վերածելով համարյա մեխանիկական համակարգի: Բազմաթիվ աղբյուրներ վկայում են, որ Համիդի կողմից կազմակերպված քարոզերը հայ ժողովրդի նկատմամբ տարվող նրա քաղաքականության դրսևորման ձևերից մեկն էին և ոչ թե նրա հետադիմական ներքին քաղաքականության պատահական հետևանքը: Կոտորածներն իրականացվում էին նույն ձեռագրով, նախորդ ծրագրավորված վերջին Համիդը արյունոտ, «Կարմիր» սուլթանի տիրապետական պիտակին «արժանացավ» հայ բնակչության զանգվածային կոտորածներով: Այսպիսով «Կարմիր» սուլթանը մի կողմից հետադիմանորեն կյանքի էր կոչում ազգային գաղափարախոսությունը /պանիսլամիզմը/, իսկ մյուս կողմից վերջնական լուծում տալիս հայկական հարցին, մի հարց, որ լույս հանցի, հանգստության, կյանքի ու գույքի, պատվի ապահովության խնդիր չէր, այլ հայ ազգի գոյության և չգոյության, Հայաստանի վերածնունդ կամ վերջնական կործանման խնդիր:

Այս առումով ճարտարագիտական բուհում լրացուցիչ կրթության ենթակառուցվածքի ներմուծումը կարող է եական նշանակություն ունենալ, մասնավոր՝ նկատի ունենալով նրա գերակշիռ հումանիտար ուղղվածությունը:

- Լրացուցիչ կրթական ծրագրերը սովորաբար ընդգրկում են հետևյալ ուղղությունները՝
- լեզուներ,
 - կառավարչական,
 - սոցիոլոգիական,
 - հոգեբանա-մանկավարժական:

Սա հնարավորություն է տալիս ապագա ճարտարագետին հիմնական մասնագիտությանը զուգահեռ ձեռք բերել լրացուցիչ մասնագիտություն, որն ունի հասարակական բավարար (իսկ շատ հաճախ բարձր) պահանջարկ, բնականաբար, նպաստում է ճարտարագիտական բուհի հեղինակության և հանրամատչելիության բարձրացմանը:

Ուսանողների լրացուցիչ կրթության ենթակառուցվածքի գործունեության հիմքում, ըստ իս, կարող են դրվել հետևյալ կազմակերպական սկզբունքները՝

- ճկունություն և դիմամիկություն, որը նշանակում է նրա արագ վերակառուցումը հասարակության և անձի պահանջմունքների փոփոխություններին համահունչ,
- զուգահեռություն, որը ենթադրում է երկու մասնագիտությամբ ուսուցման հնարավորության ապահովում և խրախուսում,
- հաջորդականություն, այսինքն բազային մասնագիտությամբ ուսումնական գործընթացի օրգանական լրացում,
- միջառարկայական բնույթ, որի շնորհիվ պետք է բացառվի ինֆորմացիայի կրկնօրինակման հնարավորությունը հիմնական և լրացուցիչ կրթության ծրագրերով,
- բազմապրոֆիլայնություն, որը ենթադրում է ուսանողների կրթական տարաբնույթ պահանջմունքներին համապատասխան լայն սպեկտրի ծրագրերի առկայություն,
- բացություն՝ այսինքն այս ծրագրերով ուսումնառություն կարող են անցնել ոչ միայն ուսանողները, այլև աշխատակիցները, այլ բուհի ուսանողները և այլն:

Լրացուցիչ կրթության ենթակառուցվածքը ոչ միայն կորոշվի արտաքին և ներքին միջավայրերի պարամետրերով, այլև ինքը և կարող է ազդել նրանց վրա:

Մասնավորապես, մեր բուհում այն կարող է զգալիորեն մեծացնել կրթական ծառայությունների ոլորտը, խորացնել ուսանողի ճանաչողական պահանջմունքները և հետաքրքրությունները:

Միևնույն ժամանակ ինչպես ցանկացած նորամուծություն, այն ևս կանգնած է որոշակի հիմնախնդիրների առջև: Դրանց թվին կարելի է դասել չափորոշիչ-իրավական բազայի բացակայությունը, ֆինանսական դժվարությունները, ինֆորմացիոն ապահովումը, նյութատեխնիկական բնույթի հարցեր և այլն:

ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

Էդ. Կյուրեղյան, Ռ. Ռահանյան

ՀՊԵՅ-ն առաջիններից մեկն էր Հայաստանում, որ դեռևս 80-ական թվականների վերջերից սկսվեցին կրթական համակարգի բարեփոխումները: Այն հետագայում դարձել է մյուս բուհերի, ընդհուպ մինչև Հայաստանի կրթական համակարգի բարեփոխումների, «կրթության մասին օրենքի» մշակման փորձամուշներց մեկը: Բարեփոխումները, անկախ առկա դժվարություններից ու թերություններից կազմակերպման ու կառավարման որոշակի դեմոկրատացում, ազատությունների մեծացում: Սա իր հերթին առաջնային է դարձնում «դասախոս-ուսանող», «ղեկավարություն-ենթակայություն» հարաբերություններում արդյունավետ ետադարձ կապի ապահովումը: Վերջինիս իրագործման առավել ստուգված ու գործածական միջոցներից մեկը սոցիոլոգիական հարցումներն են, մասնավորաբար՝ դասախոսների անձնական, մասնագիտական և մանկավարժական որակների վերաբերյալ ուսանողների կարծիքների ուսումնասիրությունը: Այն, 80-ականների կեսերից

արդեն անցկացվում էր նախկին Դոլիտեխնիկական ինստիտուտի որոշ ուսումնական ստորաբաժանումներում (մասնավորաբար Լենրգետիկական ֆակուլտետում), որը հետագայում կիրառվեց ողջ ինստիտուտի շրջանակներում:

Այսօր, երբ ՀՀ 4 և 9 նախարարի հրամանով օրենքի ուժ է ստացել «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների պրոֆեսոր-դասախոսական կազմի աշխատանքի որակի և վարած դասընթացների գնահատման սոցիոլոգիական հետազոտման օրինակների կարգը», նման հարցումները ու նրանց կիրարկումը պահանջում են գիտական քննարկում և հետևություններ:

Կարծում ենք այս տիպի աշխատանքները միայն կշահեն, եթե ուսումնական մասի հետ համատեղ (ինչը նախատեսված է կանոնակարգում) սոցիոլոգիական հետազոտությունները անցկացվեն մասնագետների հետ, որը ՀՊԵՅ-ում առկա է (Տեղեկատվական-վերլուծական կենտրոնի սոցիոլոգիական լաբորատորիան): Մյուս կողմից, «Մեծ թվերի օրենքի» պահանջները բավարարելու և արդյունքների ներկայացուցչությունն ու հավաստիությունը ապահովելու համար հիմնավոր է մի շարք անգամներ (օրինակ, երեք կիսամյակ անընդմեջ) համատարած հարցումների անցկացումը՝ ի հավելումն կանոնակարգով նախատեսվածի:

«Դասախոսը ուսանողի աչքերով» հարցաշարով ուսումնասիրությունները թույլ են տալիս բավական մանրակրկիտ վերլուծելու և կատարելագործման առաջարկներ ներկայացնելու դասախոսների, դասընթացների, կրթական ծրագրերի, ամբիոնների (սեկտորների) և ղեկավարամենտի գործունեության համապատասխան բաղադրամասերի վերաբերյալ:

Բացի կոնկրետ առաջարկների հիման վրա ուսումնառության կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացումից, նման հարցումները ունեն նաև բարոյական արդյունք: Դրանք ակնհայտորեն (թեկուզ և դանդաղ) դրականորեն են անրադառնում կրթական միջավայրի բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Ուսանողները աստիճանաբար գիտակցում են, որ իրենց կարծիքի հետ հաշվի են նստում այնպիսի մի կարևոր հարցում, ինչպիսին դասախոսի ատեստավորումն է, կամ դասընթացի արդյունավետությունը, իսկ դասախոսները «ստիպված» ավելի են հարգում ուսանողների հավաքական կարծիքը իրենց անձնավորության և մասնագիտական որակների մասին: Արդեն իսկ մինչ այժմ անցկացված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, կամա թե ակամա, դասախոսները «աննկատելիորեն» ավելի բարեհամբույր, համբերատար և հավասարակշիռ են դառնում ուսանողներ հանդեպ ու դասավանդման ընթացքում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԴԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱՎԵՐԴՊՄԱՆ ՈՐՈՇ ԱՇԽԱՍԱՆՔՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բ. Բալասանյան

Նոր ուսումնական տարվա ուսումնական գործընթացի նախապատրաստումը և կազմակերպումը բավականաչափ աշխատատար է և պատասխանատու ուստի անհրաժեշտ է համալսարանում ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման համար մշակել և ներդրել ավտոմատացված համակարգ: ՀՊԵՅ-ի ուսանողների տվյալների ավտոմատացված մշակման համար ՀՊԵՅ-ում արդեն ստեղծվել է ներդրվել է «Ուսանող» ավտոմատացված համակարգը, որը բաղկացած է «Գնահատականների մուտքագրում», «Ուսանողների անձնական տվյալներ» և «Ունյոխնգային համակարգ» երեք ենթահամակարգերից: «Ուսանող» ավտոմատացված համակարգը ամբողջական տեղեկատվություն է տալիս ցանկացած ուսանողի վերաբերյալ և հնարավորություն է ընձեռում ստեղծել տարատեսակ ամփոփաթղթեր: Հետևաբար, ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման ավտոմատացված համակարգը պետք է ձևավորվի համալսարանում ստեղծված ինֆորմացիոն համակարգերի հիմքի վրա, որը հնարավորություն կտա ավելացնել համալսարանական տվյալների բազան:

Ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը և որակը ամփ-
 օքսպես կախված են այդ գործընթացի նախապատրաստական աշխատանքների որակից,
 որոնց շարքին դասվում են հետևյալ աշխատանքները

- ՀՊՃՀ-ի ղեկարարամենտներում մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների հիման վրա բոլոր ակադեմիական խմբերի տարեկան ուսումնական պլանների կազմում;
- ՀՊՃՀ-ի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալի հաշվարկում և հաստատում ըստ ամբիոնների և սեկտորների;
- ՀՊՃՀ-ի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալի հաշվարկում և հաստատում ըստ ղեկարարամենտների;
- ՀՊՃՀ-ի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալի հաշվարկում և հաստատում ըստ կրթաբաշխիչների;
- ՀՊՃՀ-ի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալի հաշվարկում և հաստատում ըստ դպրոցների;
- ՀՊՃՀ-ի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալի հաշվարկում և հաստատում:

ՀՊՃՀ-ի ուսումնական գործընթացի ավտոմատացված պլանավորման և կազմակերպման համար ՄԱՍ ղեկարարամենտում մշակվել է ալգորիթմ, որը մեր կարծիքով կարող է հիմք հանդիսանալ համալսարանում «Ուսումնական գործընթացի պլանավորում և կազմակերպում» ավտոմատացված ենթահամակարգի մշակման և ներդրման համար:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տվյալների մուտքագրման ձևից է կախված ավտոմատացված ենթահամակարգի մշակման և ներդրման բարդությունը, և տվյալների մուտքագրման համար ամենամաատակարարն էր տարեկան ուսումնական պլանների ձևը, որը որպես հիմք է ընդունվել նկարում բերված սխեմայի մշակման համար: Ի տարբերություն տարեկան ուսումնական պլանների ձևի այն ներառում է լրացուցիչ ինը սյունակ՝ 1,2,4,5,14,22, 26, 27 և 28.

Մասնագիտությունների ուսումնական պլաններից համապատասխան սյունակներում մուտքագրվում են. 1՝ ակադեմիական խմբի համարը, 2՝ առարկայի դասիչը, 3՝ առարկայի անվանումը, 4՝ կենտ կիսամյակի թիվը, 5՝ զույգ կիսամյակի թիվը, 9,10,11 և 18,19,20՝ համապատասխանաբար դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների շաբաթական ժամաքանակը, 12,13,14,15 և 21,22,23,24՝ կիսամյակի համարը, եթե այդ կիսամյակում նշված համապատասխան տողի առարկայից կա կուրսային նախագիծ կամ աշխատանք, նշված համապատասխան տողի առարկան քննական է կամ ոչ քննական, 26,27՝ համապատասխանաբար սպասարկող ղեկարարամենտի և դպրոցի դասիչը. Ընդ որում, եթե առարկան սկսվում է զույգ կիսամյակում և շարունակվում է կենտ կիսամյակում, տվյալները մուտքագրվում են երկու տողով, կուրսային նախագիծ կամ աշխատանքի տվյալները մուտքագրվում են առանձին տողով: Տարեկան և կիսամյակներում ժամերի քանակը հաշվարկվում է ըստ մշակված ծրագրի, որը հաշվի է առնում կիսամյակի թիվը:

Նույն արդյունակի մեջ նշված կարգով ուսումնական պլաններից մուտքագրվել են ՄԱՍ ղեկարարամենտի բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների տվյալները, որից հետո ստուգվել է ծրագրի աշխատունակությունը: Ստուգման արդյունքները ցույց են տվել, որ մշակված համակարգը և ուսումնական գործընթացի մուտքագրման առաջարկվող սխեման հնարավորություն է ընձեռնում ստեղծել ակադեմիական խմբերի տարեկան ուսումնական պլաններ, հաշվարկել ուսումնական ընդհանուր բեռնվածությունը ըստ սեկտորի, ամբիոնի և ղեկարարամենտի, հաշվարկել վերականգնվող ուսանողի ակադեմիական տարբերությունները:

Այսպիսի ուսումնական պլանների տվյալների մուտքագրումների կիրառումը ՀՊՃՀ-ում հնարավորություն կընձեռնի ստեղծել ՀՊՃՀ-ի ակադեմիական խմբերի տարեկան ուսումնական պլաններ, հաշվարկել ուսումնական ընդհանուր բեռնվածությունը սեկտորի, ամբիոնի, ղեկարարամենտի, կրթաբաշխիչի և դպրոցի կտրվածքներով, վերահսկել վերականգնվող ուսանողների առարկայական ակադեմիական տարբերությունները:

Կրթա- նյակ	Կենտ կիսամյակ						Զույգ կիսամյակ								
	Կիսամյակ Շաբաթ			Կիսամյակ Շաբաթ			Կիսամյակ Շաբաթ			Կիսամյակ Շաբաթ					
	1	3	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29
մյուսնյակի վրակազմակերպում	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա
	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ	Բ
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02	01 02
Գլխավոր մեթոդական	1	2	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1	10-1
Գլխավոր մեթոդական	2	01 01	01 01	01 01	01 02	01									

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴԱՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ս. Հովհաննիսյան

Հայաստանում ժողովրդավարական-քաղաքացիական հասարակության ձևավորման բարդ ու հակասական գործընթացները բնականոն հունի մեջ դնելու գործում իր ուրույն բաժինն ունի ճարտարագիտական համալսարանը: Իսկ նրա պատրաստած բազմապրոֆիլ կադրերի մասնագիտական կարողությունների օգտակարության աստիճանը ժողովրդավարական-քաղաքացիական հասարակության հիմքերի ոչ միայն ամրապնդման, այլև զարգացման գործընթացում կարող է որոշվել նաև քաղաքական-տնտեսական համակարգի ամենատարբեր օղակներում ՀՀ-ի կադրերի ներկայությամբ: Հետևաբար, նկատի ունենալով սույն իրողությունը, մենք առաջարկում ենք.

ա) ՀՀ-ում անհրաժեշտ է շոշափելիորեն բարձրացնել քաղաքագիտության դասավանդման ընդհանուր մակարդակը՝ քաղաքագիտության ծրագրի նպատակային ընդարձակման միջոցով,

բ) բոլոր դեպքերում անհրաժեշտ է կազմակերպել «Կառավարման հոգեբանություն», «Կառավարման սոցիոլոգիա», «Կառավարման մեթոդները», «Շուկայական համակարգում կառավարման առանձնահատկությունները», «Լիդերության դերը կառավարման գործունեության մեջ» հատուկ դասընթացներ: Ընտրովի հատուկ դասընթացների կազմակերպումը հնարավորություն կընձեռի ուսանողներին (վաղվա ղեկավարներին) քաղաքական-տնտեսական համակարգում գործել քաղաքականության բարդ արվեստի մասին արդեն ձեռք բերած որոշակի գիտելիքներով,

գ) քաղաքագիտության դասավանդումը ՀՀ-ում դնել պրագմատիկ հիմքերի վրա տեսական գիտելիքների համադրման ճկուն մեխանիզմի օգնությամբ,

դ) քաղաքագիտական վերը նշված հատուկ դասընթացների մեթոդիկան կառուցել համապատասխան ուսումնական խաղերի և սցենարների կիրառությամբ:

Այս ճանապարհով ՀՀ-ն իր նկատելի մասնակցությունը կբերի Հայաստանում գրեթե սաղմնային վիճակում գտնվող, նաև քաղաքական մշակույթի ձևավորման ներկա փուլում ընթացող այնքան անհրաժեշտ գործընթացներին:

Քաղաքագիտության դասավանդման ծրագրի ընդարձակման նման փորձի կիրառումը նպատակ ունի ճարտարագիտական կադրերի պատրաստման գործը զուգորդել քաղաքական-պետական համակարգի թելադրած օբյեկտիվ պահանջներին հետ:

ՀՊԵՅ – ՈՒՄ ԴԻՊԼՈՄԱՎՈՐԱԿԱԾ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԿՑՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐ

Ս. Սամյան

Հանածայն կրթության մասին օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում արտոնված է նաև դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագիրը, որը 2000/2001 ուսումնական տարվանից ներդրված է նաև ՀՀ-ում մի շարք մասնագիտությունների գծով, որոնցից են՝ 25.01 - Օրգանական նյութերի քիմիական տեխնոլոգիա, 10.01 - էլեկտրակայաններ, 10.04 - էլեկտրամատակարարում, 10.05 - Ջերմաէլեկտրակայաններ, 10.10 - Ատոմային էներգետիկա, 18.07 - էլեկտրական տրանսպորտ, 12.01 - Մեքենաշինության տեխնոլոգիա, 13.03 - Թռչող ապարատների և շարժիչների տեխնիկական շահագործում, 24.01 - Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում, 20.07 - Ռադիոտեխնիկա, 20.04 - Արդյունաբերական էլեկտրոնիկա, 08.07 - Օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզության տեխնոլոգիա և տեխնիկա, 11.04 - Սև և գունավոր մետաղների ծուլման արտադրություն, 29.03 - Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն, 23.01 - Տրանսպորտային և տեխնոլոգիական մեքենաների ու սարքավորումների սպասարկում և տեխնիկական շահագործում (վերջին երկուսը ՀՀ-ում գյուղատնտեսական կործակման փուլում): Նշված մասնագիտությունների ուսումնառությունը նախատեսված է իրագործել հինգ տարվա ընթացքում (10 կիսամյակ):

Դիպլոմավորված մասնագետի ծրագրի ներդրումը ամենից առաջ պահանջում է կրթական չափորոշիչների մշակում, որոնց մեջ առաջնահերթ խնդիր է հնգամյա ուսումնական պլանների կազմումը: Դիպլոմավորված մասնագետը, ի տարբերություն շահագործող մասնագետի, ինչպեսին է բակալավրական ծրագիրը, նախագծող և հետազոտող մասնագետ է, ուստի ուսումնական պլանները կազմելիս պետք է բակալավրական ծրագրին ավելացնել այնպիսի դասընթացներ, որոնք տեղ էին գրավում մագիստրոսական կրթական ծրագրում: Դիպլոմավորված մասնագետի ուսումնական պլաններում պատշաճ տեղ պետք է ունենան նաև պրակտիկաները, այսինքն ի տարբերություն բակալավրական ծրագրի, անհրաժեշտ է ավելացնել ինչպես պրակտիկաների թիվը և ժամաքանակը, այլև կտրուկ փոխել նրանց բովանդակությունը և իրագործման մեխանիզմները: Հնգամյա կրթական ժամանակահատվածը հնարավորություն կտա առանձին ուսումնական կիսամյակ նախատեսել նախադիպլոմային պրակտիկայի և դիպլոմային նախագծի կատարման համար:

Բակալավրական կրթական ծրագրի ուսումնական պլաններով տեսական ուսուցման համար նախատեսված է 3732 ժամ, որոնք բաշխված են ութ ուսումնական կիսամյակներում (16 - ական շաբաթներ առաջին յոթ կիսամյակներում և 6 շաբաթ ութերորդ կիսամյակում): Դիպլոմավորված մասնագետի ծրագրի համար առաջարկվում է ինը կիսամյակ տեսական դասընթացների համար, իսկ տասներորդ կիսամյակը նախատեսել նախադիպլոմային պրակտիկայի, Պետական մասնագիտական քննության հանձնման և դիպլոմային նախագծի կատարման ու պաշտպանության համար:

Գոյություն ունեցող ուսումնական պլանների սահուն անցման համար առաջարկվում են 3 + 2 և 2 + 3 տարբերակները: Սեր կարծիքով նպատակահարմար է վերջին տարբերակը, այսինքն գոյություն ունեցող բակալավրական ուսումնական պլանների առաջին երկու տարիները պահպանել, իսկ մնացած երեք տարիների համար կազմել նոր ուսումնական պլաններ՝ հաշվի առնելով դիպլոմավորված մասնագետին անհրաժեշտ պահանջները: Բացի այդ, առաջարկվում է դիպլոմավորված մասնագետի ուսումնական պլանում 5 - 10 կիսամյակների տևողությունները դարձնել 17 շաբաթ: Փաստորեն, նոր ուսումնական պլաններում համարյա անփոփոխ են մնում հումանիտար և հիմնարար կրթարվյակները, փոփոխվում են մասամբ ընդհանուր ճարտարագիտական և հիմնովին մասնագիտական կրթարվյակները:

2000/2001 ուսումնական տարվանից ՀՀ-ում վերսկսվում է հեռակա ուսուցում, որը իրականացվելու է դիպլոմավորված մասնագետի ծրագրով 6 տարի տևողությամբ: Հեռակա ուսուցման ուսումնական պլանները կազմելիս մենք նպատակահարմար ենք գտնում այն իրագործել, նրա մեջ ներառնելով ստացիոնար ուսուցման տարրեր, այսինքն շաբաթվա երեք օրերին հեռակա ուսանողների համար կազմակերպել ուսումնական պարապմունքներ (շաբաթական մոտ 10 -12 ժամ):

Մյուս հրատապ խնդիրները է դիպլոմավորված մասնագետի համար կազմել առարկայան ծրագրեր և նրանց ատեստավորման չափանիշների մշակումը:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ ԴԱՍԸՆԹԵՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կ.Արզումանյան, Մ.Հարությունյան

Ժամանակի պահանջն է ապագա մասնագետի ուսուցումը կազմակերպել այնպես, որ նա ձեռք բերի ինքնուրույն աշխատելու հմտություն, կարողանա ցուցաբերել ստեղծագործական մոտեցումներ, հնից նորին անցնելու, արագ վերակառուցվելու և ոչ ստանդարտ մտածելու ունակություններ: Կիրառական մեխանիկան, որպես ընդհանուր ճարտարագիտական շարքի առարկա, լրացնում է ապագա մասնագետի ընդհանուր գիտական բազան: Յուրաքանչյուր ճարտարագետ պետք է իմանա տեխնիկական օբյեկտների կազմում եղած մեխանիկական համակարգերի հիմնական տեսակները, հատկությունները և դրանց տարրերի հաշվարկման սկզբունքները, որպեսզի պարզ պատկերացնի դրանց

գործողության և փոխազդեցության սկզբունքները, ինչը հնարավորություն կընձեռի վերացնելու տեխնիկական օբյեկտի շահագործման ընթացքում առաջացող անսարքությունները:

Սույն աշխատանքի նպատակներն են՝

- կազմակերպել առարկայի ուսումնառության մոտիվացված և համաչափ աշխատանքային գործընթաց, բարելավել առարկայի դասավանդման որակը,
- ընդարձակել և խորացնել առարկայի ուսումնառության համար ուսանողի ինքնուրույն աշխատանքների շրջանակները, ստանալ անաչառ և ճշգրիտ տեղեկություն ուսանողի գիտելիքների վերաբերյալ,
- անհատականացնել ուսումնառության գործընթացը և ստեղծել ուսանողների գիտելիքների ստուգման գործընթացի ավտոմատացման նախադրյալներ,
- ուսումնական գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր, նպաստել ուսանողի և դասախոսի աշխատանքի արդյունավետության բարձրացմանը,
- ճիշտ գնահատել յուրաքանչյուր բաղադրիչի դերը և նշանակությունը:

Սույնի կիրարկումը հնարավորություն է ընձեռում

- հաշվի առնել գիտելիքների գնահատման ընթացքում ուսումնական գործընթացի բոլոր բաղադրիչները, ինչպես նաև ուսանողի ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը,
- դյուրին դարձնել մատուցվող նյութի յուրացումն ըստ բաժնիների և բաղադրիչների, կազմակերպել արդյունավետ ուսումնական գործընթաց,
- հիմնավորել պահանջները յուրաքանչյուր բաղադրիչի ռեյտինգային միավորների ձևավորման գործընթացում, ստեղծել առարկայի ուսումնառությունը խրախուսող գործուն համակարգ:

Աշխատանքում ներկայացված են "Կիրառական մեխանիկա" դասընթացի ծրագիրը և տիպային օրացուցային պլանը, առարկայի կիսամյակային ռեյտինգի կառուցվածքը և ստուգողական միջոցառումների ժամանակացույցը, ինչպես նաև առարկայի առանձին բաղադրիչների դասավանդման, դրանց ռեյտինգային միավորների ձևավորման և ուսանողների գիտելիքների ատեստավորման ընթացակարգերը: Նախատեսվում է ճարտարագիտության բակալավրի և կրտսեր ճարտարագետի ծրագրերով "Կիրառական մեխանիկա" առարկան դասավանդող պրոֆեսորադասախոսական կազմի համար [1]:

Դասախոսությունների ժամանակ ուսանողին ներկայացվում են յուրաքանչյուր թեմայի հիմնական դրույթները, դիտարկվում են տարբեր օրինակներ և վերլուծվում տեսառաջնորդ հարցեր: Ավելի մանրամասն ուսանողը ծանոթանում է ուսումնասիրվող թեմային՝ օգտվելով տպագրված դասախոսությունների տեքստերից: Դասախոսությունների ժամանակ օգտագործվում են դիդակտիկ նյութեր, որոնց բովանդակությունը համապատասխանում է դասախոսությունների տեքստերին:

Լաբորատոր աշխատանքները կատարելու համար յուրաքանչյուր ուսանող ստանում է լաբորատոր և հաշվեգրաֆիկ աշխատանքների կիսամյակային տետր, որի վրա նշված է նրա անհատական գրանիշը: Լաբորատոր ժամերը իրականացվում են հետևյալ կարգով.

- ուսանողները ստանում են մեթոդական ձեռնարկը, ծանոթանում աշխատանքի տեսական դրույթներին և բովանդակությանը, որից հետո դասախոսը տալիս է անհրաժեշտ բացատրություններ,
- ուսանողները ըստ գրանիշի կատարում են աշխատանքը և կիսամյակային տետրերում գրանցում բոլոր արդյունքները, որից հետո աշխատանքը ստուգվում և գնահատվում է դասախոսի կողմից:

Լաբորատոր աշխատանքների միավորները գումարվում են այդ աշխատանքների կատարման և հանձնման համար նախատեսված, դասախոսությունների ու լաբորատոր աշխատանքների կանոնավոր դասահաճախումների և հաշվեգրաֆիկական աշխատանքների միավորներից: Լաբորատոր աշխատանքների կատարումը, հանձնումը և գնահատումը դասախոսի կողմից գրանցվում է կիսամյակային տետրում:

Հաշվեգրաֆիկական աշխատանքների նպատակն է ստուգել ուսանողների կողմից դասընթացի առանձին թեմաների յուրացումը և գիտելիքների գործնական կիրառման

ունակությունը: Հաշվեգրաֆիկական աշխատանքները ուսանողները կատարում են ըստ գրանիշի, կիսամյակային տետրերում: Աշխատանքները կիսամյակի ընթացքում ներկայացվում են դասախոսին ստուգման և գնահատման:

Ստուգողական աշխատանքների նպատակն է ստուգել ուսանողների կողմից լաբորատոր և հաշվեգրաֆիկական աշխատանքների նյութերի յուրացման աստիճանը: Ուսանողը ստուգողական աշխատանքը կատարում է սեկտորի կողմից մշակված ձևով, որը ստուգվում է հանձնաժողովի կողմից: Դասախոսը չի մասնակցում իր ուսանողների աշխատանքների ստուգմանը: Ստուգողական աշխատանքները իրականացվում են ժամանակացույցով նախատեսված շաբաթներում, որպես կանոն, չեն վերահասանձնվում, և դրանց արդյունքները գրանցվում են անվտիպագրի "գործնական" սյունակում:

Կուրսային նախագծերը կան աշխատանքները ուսանողները, որպես կանոն, կատարում են դասախոսի ղեկավարմամբ լսարանում՝ օգտվելով [10, 11] գրականությունից: Առաջադրանքի տվյալները ուսանողները վերցնում են ըստ գրանիշի, իսկ հաշվարկները կատարվում են սեկտորի կողմից մշակված հաշվեբացատրագրի ձևում: Կուրսային աշխատանքը չհանձնած ուսանողները չեն մասնակցում տեսական դասընթացի եզրափակիչ հարցմանը:

Միջանկյալ և եզրափակիչ հարցումների ընթացքում ուսանողների գիտելիքները ստուգվում են տեստերի միջոցով: Եզրափակիչ հարցմանը մասնակցում են այն ուսանողները, որոնք կատարել են բոլոր լաբորատոր աշխատանքները և հանձնել են կուրսային աշխատանքը:

Գրականություն

1. Կ.Արզումանյան, Մ.Հարությունյան: Կիրառական մեխանիկա առարկայի դասավանդման, ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման գործընթացների կազմակերպումը: Մեթոդական ձեռնարկ: ՀՊԵՀ: Երևան, 2000թ., 15 էջ:

ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԲՆԱՊՄԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴԱՍՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կ. Թահմազյան

Ներկա ժամանակաշրջանում համայն մարդկության, միավորված ազգերի կազմակերպության ուշադրության կենտրոնում է գտնվում շրջակա միջավայրի պահպանությունը և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման խնդիրները:

Արդի գիտատեխնիկական պրոգրեսը ամբողջ աշխարհում անմիջականորեն կապված է բնական ռեսուրսների զլոբալ օգտագործմամբ: Մարդը՝ մարդկային հասարակությունը դարձել է բնության վերափոխման հզոր գեոլոգիական ուժ: Արդյունաբերության գործունեության հետևանքով առաջացել է բարդ կառուցվածքային փոխազդեցություն տեխնիկական առաջընթացի և բնության՝ շրջակա միջավայրի միջև, որն անվանվում է բնատեխնիկական գեոհամակարգ:

Բնատեխնիկական գեոհամակարգը, որը ձևավորվել է համաձայն բնության և հասարակության փոխազդեցության զարգացման օրենքներով, հանդիսանում է էկոլոգիական գիտության զարգացման նոր ուղույն ուղղությունը: Այն անվանվում է ճարտարագիտական էկոլոգիա:

Ճարտարագիտական էկոլոգիայի կարևորագույն, հիմնական խնդիրներից մեկը հանդիսանում է բնատեխնիկական համակարգի այնպիսի մեթոդների և միջոցների ձևավորումը և ղեկավարումը, որոնք կապահովեն շրջակա միջավայրի հավասարակշռությունը, նրա բնականոն զարգացումը:

Ներկայումս զարգացած բոլոր երկրների ճարտարագիտական կրթական ծրագրերում պարտադիր դասընթաց է հատկացված ճարտարագիտական բնապահպանման խնդիրներին:

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի քիմիական տեխնոլոգիաների և բնապահպանական ճարտարագիտության դեպարտամենտում 64 ժամյա ծա-

վալով ընդհանուր "Բնապահպանական ճարտարագիտություն" դասընթաց է մտցված: Ծրագրում բացի էկոլոգիայի հիմունքներից հատուկ տեղ է հատկացված նաև քիմիական տեխնոլոգիաների մասնագիտության ձեռնարկությունների պիլո, հեղուկ և գազային արտանետումների վերահսկման տեխնոլոգիաներին: Վերջինս արտացոլվում է նաև ավարտական աշխատանքներում:

Սեր կարծիքով 3763-ի գիտական խորհրդի որոշմամբ համանուն դասընթացի մուտքը համալսարանի համապատասխան ուսումնական պլաններում խիստ ակտուալ խնդիր է:

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԻՐԱՎԱՆՑՈՒՄԸ ԲՈՒՋԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

4. Սահակյան

1. Գիտության և արտադրության ինտեգրացման մեր ժամանակներում ավելի ու ավելի հրատապ է դառնում միջառարկայական կապերի հիմնական հարցը, որին մեծ ուշադրություն են դարձրել նաև դասական շատ մանկավարժներ ու ականավոր հոգեբաններ: Նրանք միջառարկայական կապերի խելամիտ իրականացումը իրավացիորեն դիտարկում են որպես և՛ դպրոցական, և՛ բուհական ուսուցման օպտիմացման կարևոր միջոց:

2. Մանկավարժությունը միջառարկայական կապերի մեջ է բազում գիտության ճյուղերի հետ, սակայն նա սերտ կապերի մեջ է հատկապես հոգեբանության հետ: Ձուր չէ, որ դեռևս գերմանացի դասական մանկավարժ-հոգեբան Ֆր. Յերբարդը մանկավարժությունը համարել է կիրառական հոգեբանություն, իսկ ռուս դասական մանկավարժ Կ.Դ.Ուշինսկին մանկավարժությունն ու հոգեբանությունը համարել է, պատկերավոր ասած, ցեղակից գիտություններ: "Եթե մանկավարժությունն ուզում է դաստիարակել մարդուն բոլոր տեսակետներից, ապա նախ նա պետք է ճանաչի մարդուն նույնպես բոլոր տեսակետներից" (Ուշինսկի): Դեռևս հոգեբանությունն է օգնում մանկավարժներին "բոլոր տեսակետներից" լավ ճանաչելու իրենց սաներին, մշտապես հաշվի առնելով նրանց տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները:

3. Եվ՝ հանրակրթական, և՛ մանկավարժական կադրեր պատրաստող բուհում մանկավարժ չի կարող հաջողությունների հասնել, եթե լավատեղյակ չլինի ուսուցման ու դաստիարակության հոգեբանական հիմունքներին: Այսպես, օրինակ, պրոֆ. Ի.Պ.Պոդլասին "Մանկավարժություն" բուհական ձեռնարկում (ռուս., 1996) տարբերակել ու բնութագրել է ուսուցման ղիդակտիկան, հոգեբանական, իմացաբանական, կիրեռնետիկական, սոցիոլոգիական, և կազմակերպական տասնյակ օրինաչափություններ, որոնք յուրօրինակ ուղեցույց պիտի ծառայեն ուսուցչի և դասախոսի համար: Ինչ վերաբերում է ուսուցման ու դաստիարակության բուն հոգեբանական օրինաչափություններին, ապա կուզենայինք հիշեցնել այժմեական հնչողություն ունեցող Կ.Դ.Ուշինսկու հետևյալ խելամիտ պահանջը: "Մենք մանկավարժներին չենք ասում վարվեցեք այսպես կամ այնպես, բայց նրանց ասում ենք՝ ուսումնասիրեցեք այն հոգեբանական երևույթների օրենքները (ընդգծումը մերն է Կ.Ս.), որոնք դուք ուզում եք կառավարել և վարվեցեք այդ օրենքների և այն հանգամանքների համաձայն, որոնց մեջ դուք ուզում եք գործադրել դրանք":

4. Մենք համամիտ ենք պրոֆ. Ա.Բալյանի այն կարծիքին, որ մանկավարժական կադրեր պատրաստող բուհերում լուրջ ուշադրություն չի դարձվում ուսանողներին միջառարկայական կապեր ստեղծելու հմտություններով և կարողություններով զինելու երկյակարևոր հիմնահարցին: Այստեղ ևս նկատելի է տեսական և գործնականի խզման տեղու միտում: "Առաջինը ուսանողների տեսական պատրաստման ուժեղացումն է, որի դեպքում մեծանում է միջառարկայական կապերի ղեկը (ընդգծումը մերն է Կ.Ս.)" առաջատար հոգեբանամանկավարժական գաղափարների ձևավորման պայմանով (Ա.Բալյան, մանկավարժական հոգեբանության հարցեր, 1988թ., էջ 440): Սակայն դրան հակառակ շատ քույլ է "ապագա ուսուցիչ-դաստիարակների գործնական նախապատրաստումը: Մանկավարժության և մանկավարժական հոգեբանության դասընթացները երբեմն վերածվում են համաձայնարարականների, այն բանի, թե ինչպես տեսությունը կիրառել գործնականում, մինչդեռ բացակայում է այդ պրակտիկան" (Նույն տեղում): Հատկապես մանկավարժության և հոգեբանության սկսնակ դասախոսներին խորհուրդ կտայինք յուրաքանչյուր

ուսումնական տարվա սկզբում կազմել միջառարկայական կապերի քարտեք թերևս տարողունակ թեմաներից, կոնկրետ մատնանշելով, թե մանկավարժությունից տվյալ թեման ուսումնասիրելիս ինչպիսի կապեր են ստեղծվելու հոգեբանության այս կամ այն մասնաճյուղի հետ, ասենք ընդհանուր մանկավարժություն - ընդհանուր հեգեբանություն, տարիքային մանկավարժություն-տարիքային հոգեբանություն, էթնամանկավարժություն - էթնահոգեբանություն և այլն:

5. Մանկավարժության ու հոգեբանության միջառարկայական կապեր ստեղծելու համար լայն հնարավորություն է ընձեռում նաև ուսանողների մանկավարժական պրակտիկան, մանավանդ, որ ուսանող-պրակտիկանտներից պահանջվում է կազմակերպել դասարանի (կոլեկտիվի) հոգեբանական բնութագիրը, ինչպես նաև աշակերտի տարիքային-հոգեբանական առանձնահատկությունների նկարագիրը: Ոչ միայն մանկավարժության ու հոգեբանության, այլ նաև մասնավոր մեթոդիկաների ամբիոնները պիտի ապագա ուսուցիչներին պրակտիկանտ ուսանողներին միաժամանակ զինեն միջառարկայական կապեր ստեղծելու հմտություններով ու կարողություններով:

ԳՈՐԾԱՐԱՐ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՔՈՍՓՅՈՒԹԵՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ա.Սարուխանյան

Անկախության ձեռք բերումից հետո Հայաստանի Հանրապետությունը միջազգային կապեր է հաստատել և շարունակում է հաստատել արտասահմանյան շատ երկրների հետ:

Հայաստանի ցանկացած հիմնարկ-ձեռնարկություն հնարավորություն է ստացել ուղղակի դուրս գալ արդաքին շուկա և կապեր հաստատել արտասահմանյան ձեռնարկությունների և ֆիրմաների հետ: Դա կարևորում է և բարձրացնում օտար լեզվի դերը արտաքին հարաբերություններում, հատկապես գործարարների ձեռնարկատիրական գործունեության ոլորտում: Նշված բնագավառում հայ և արտասահմանյան գործարարների միջև օրեցօր ընդլայնվող կապերի շնորհիվ անընդհատ աճում է օտար լեզվի՝ հատկապես անգլերենի, արագ և բարձր մակարդակով ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Արագ և բարձր մակարդակով գործարար անգլերենի ուսուցման անհրաժեշտությունը պահանջում է դասավանդման նոր, արդյունավետ մեթոդների և տեխնիկական միջոցների կիրառություն:

Ներկա աշխատանքում, որպես գործարար անգլերենի ուսուցման արդյունավետ միջոց, առաջարկվում է ընդփոխբերացված ուսուցման եղանակը՝ հիմնված անգլերենով իրականացված գործարար նմանակային խաղերի օգտագործման վրա:

Այդպիսի խաղերի օգտագործումը հնարավորություն է ընձեռում ընդփոխբերի օգնությամբ նմանակել ձեռնարկատիրական գործունեության բոլոր փուլերում ծագող հնարավոր իրավիճակները և և դրանց շուրջ բնականորեն ծավալվող մասնագիտական զրույցների միջոցով կարճ ժամանակահատվածում անհրաժեշտ մակարդակով տիրապետել գործարար անգլերենին:

Մեթոդի արդյունավետությունը հատկապես բարձր է անհատական ուսուցման դեպքում, երբ յուրաքանչյուր ունկնդրի հատկացվում է ընդփոխբեր: Սակայն չի բացառվում նաև ունկնդիրների խմբային ուսուցումը՝ կապված հատկապես խմբային կառավարչական վճիռների կայացման գործարարական խնդիրների լուծման հետ: Այս դեպքում ուսուցումը արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ անհրաժեշտ է օգտագործել հատուկ լազերային սարքեր (պրոյեկտորներ), որոնք հնարավորություն են ընձեռում լայնաչափ էկրանին արտապատկերել ընդփոխբերի դիսփլեյի էկրանին գտնվող նյութերը:

Հարկ է նշել, որ լեզվի ուսուցման նպատակով օգտագործվող գործարար նմանակային խաղերը պետք է օժտված լինեն ընդփոխբերային բառարաններով, թարգմանչական ծրագրերով և այլ օժանդակ ծրագրերով:

Ընդփոխբերացված ուսուցման վերոհիշյալ եղանակը նախատեսվում է կիրառել 3763 Համալսարան-արդյունաբերություն փոխկապակցության կենտրոնի Կապանի գրասենյակի կողմից Սյունիքի արդյունաբերական կադրերի և գործարարների համար կազմակերպվող գործարար լեզվի ուսուցման դասընթացներում: